



Հ. Ճ. ՍԻՐՈԽԻՆԻ

ԵՂԵՇՈՒ ՄԸ ԵՎ ԻՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ*

XVI.—«Հայկական դատ ա'լ չկա»

Շատեր են փորձեր գերեզման դնել հայկական դատը:

Սկսյալ անցյալ դարու այն սովորական բարեկարգության մեջ աշխարհը ուղեցին խարել, փորձելով անոր հավատացնել, թե բոլոր օսմանցիները հավասար պիտի դարձնեն օրենքին առջև և դրախտ պիտի դարձնեն երկիրը, որպեսզի ոչ ոք դժգոհության առիթ չունենա, մինչև սովորական Համբարձությունը և բողոքը կարծեցին, թե հայն այլևս պիտի չկրնա Եվրոպայի դուռները զարնել՝ դարման մուրալու համար իր տառապանքներուն:

Իթթիհազը, երբ իշխանության գլուխ եկավ 1908-ին, եղբայրություն և հավասարություն ինքն ալ հեղինեղեց պահ մը՝ աշխարհը խարելու և թուրք լուծին տակ ապրող ժողովուրդները լուցնելու համար:

Ապարդյուն անցան իր ալ փորձերը, որով հետև կեղծ էր իր հոչակած եղբայրությունը, ու հավասարությունը, բայն անգամ, դառն

Հեգնություն: Ոչ մեկ բան փոխված էր ուայացին տառապանքներեն: Հայը ստիպված եղավ անգամ մը ևս Եվրոպայի հառել աշքերը, և վերստին սեղան բերավ իր դատը:

Երիտասարդ թուրքերը այս անգամ փորձեցին իսպառ թաղել հայկական դատը՝ հայ ժողովուրդը բնապահելով:

Պատերազմը լավագույն առիթն եղավ անոնց՝ իրենց այս գժոխային ծրագրը ի կիրածելու: Թալեաթի համար հինգ ամիս բավական եղավ, որ շնական ցնծությամբ ավետի 1915 օգոստոս 1-ին Պոլսո օտար դեսպաններուն, թե հայկական դատ այլևս գոյություն չունի:

Հայկական ինդրույն մեջ իր տեսակետը ամբողջովին խոտացուցած է, կպատմե իր հուշերուն մեջ Պոլսո ամերիկան դեսպան Մորգենթաուր, — այն գոռող ճոռոմարանության մեջ, զոր ան թույլ տվավ ինքնինքին ըսել. «Ես երեք ամսվան մեջ լուծելու համար հայկական հարցը՝ ավելի գործ տեսա, քան Արդուկ Համբարձու 30 տարվան մեջ»:

Թալեաթ արդեն հաղթական կկարծեր ինքնքը:

Վարդգեսի հետ իր ունեցած վերջին տեսակցության մեջ Թալեաթ ըսեր էր.

* Եարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի Բ-Գ-Դ-Դ հ-ից:

— Այնպես մը պիտի ընեմ, որ հիսուն տարվան մեջ հայ ժողովուրդը ինքզինքը շգտնե...

Ա՛հ, խեղճ եղեռնագործ, զլուխդ դուրս հան պահ մը «Ազատության բլուր»-ի քու դամբարաննեղ, և տե՛ս...

Ո՛չ հայ ժողովուրդը կրցար մեղցնել, և ո՛չ ալ անոր դատը...

Հայ ժողովուրդը ոտքի է կրկին, և իր դատը միշտ կենդանի...

XVII.—Խողիսողելու համար մնացորդացը

Հայ ժողովուրդի դահիճները շգոհացան ամբողջ ժողովուրդ մը տեղահան ընելով իր օջախներեն՝ իրեւ թե անվնաս դարձնելու համար զայն:

Զգոհացան նույնպես տեղահանված քարվանները մեծ մասամբ բնաջնջելով ճամրան, այս կերպով իսպառ ազատելու համար տարրե մը, զոր վտանգ կնկատեին իրենց:

Այս ապերասան դատը զլուխ հանելե հետո 1915 տարվան ամուսն, անոնք գեռ չկրցան գտնել իրենց հոգեկան անդորրությունը: Որպեսզի կարենային խաղաղ քնանալ, պետք է շնուա՞ր հայ մը:

Կեղծիքով և նենդամառությամբ են շաղախված երեսութապես մարդասիրական այն հրամանագրերը, զորս Թալեհաթ օգոստոսի վիրշերուն տված է զավառական իշխանությանց, իրեւ թե հայոց դեմ հալածանքը դադրեցնելու համար, և որոնց գերմաններեն պատճենը 1915 սեպտեմբեր 2-ին հանձնած է Պոլսո գերման դեսպան Հոհենլոեին, որպեսզի ավետե հայոց ճակատագրով շահագրգովող Եվրոպային: Այդ հարահանգներեն մեկուն մեջ, որ ուղղված է Բրուսայի, Անկարայի, Գոնիայի, Իզմիթի, Աղանայի, Մարաշի, Եղեսիո, Հալեպի, Դեր Զորի, Սերաստիո, Քյոթահիո, Քարասիի, Նիյդի, Խարբերդի, Տիգրանակերտի, Քարահիսարի, Կեսարիո և Կարսո իշխանություններուն, հայոց դահիճը՝ Թալեհաթ, կըսե, թե ուրովհետև կայսերական կառավարությունը հայերը իրենց բնակավայրերին դեպի նախապես որոշված շրջանները փոխադրելով մի միակ նախատակ ուներ այս ազգին հակասեական գործունեությունը և ձեռնարկները խափանել, ինչպես նաև զայն անկարող ընել հետամուտ ըլլալու իր ազգայնական ձգտումներուն՝ հայ պետության մը կազմության մասին, և ոչ թե դանոնք չնշել, հետեւարար վերջնապես որոշված է միջոցներ ձեռք առնել քարավանները պաշտպանելու և տեղափոխության ատեն կերակրելու գանոնքը: Բարեխնամ կառավարությունը իր այս նենդամիտ կարեկցութե-

նեն կղրկեր սակայն բոլոր այն հայերը, որոնք արդեն հեռացված էին իրենց բնակավայրեն և կամ տեղափոխվելու վրա էին: Երբունաբերու Մաքիավելլը նույն այդ հրահանգին մեջ կհրամայեր այլևս տեղահան լընել զինվորներու բնտանիքները, որոշ թվով անհրաժեշտ արհեստավորներ և կաթողիկ ու բողոքական հասարակությանց պատկանողներ:

Արդ, այս խաբեպատիք հրահանգը կտրվեր պահու մը, երբ արդեն տեղահան եղած էր բովանդակ Հայոց աշխարհը՝ մեծ մասամբ ճամրան կոտորվելու ու չնշին մաս մըն ալ անապատ հասնելու համար, երբ տարագրված էին վաղուց նաև զինվորներու բնտանիքները, կաթողիկ և բողոքական հայերն ալ բաժնած էին արդեն իրենց հայ եղբայրներուն ճակատագիրը, և երբ Թալեհաթ, ինքը, ծանուցած էր աշխարհին, թե հայկական դատ այլևս գոյություն չունի:

Թալեհաթ հայոց հարցը փակված հողակելի հետո ալ գեռ չէր հագեցած գաղանային իր մոլուցքին մեջ, հայ ժողովուրդին խսպառ ազատելու իր մղձավանջը գեռ կշարունակեր վրդովել իր չոգին: Ու իր դավադիր ուղեղը հատկացուց միակ նպատակի մը՝ հայ մը շխողով աշխարհի վրա: Զարդերը բավական չէին, որպեսզի թուրքը պարտական շմնար իր պատմության: Վերապրողները ևս իրավունք պետք չէ ունենային իրեւ հայ ապրելու:

Առաջին հնարավոր միջոցը հայկական հարցը իսպառ շքացնելու մարդոց երեակայութենեն՝ ջարդերեն ճողոպրածները իսլամացնելն էր: Նոր չէր որ թուրքը այս միջոցին դիմեր էր հայ ույան անճիտելու համար:

Օսմաննեն ի վեր բնի իսլամացումները ամեննեն սիրելի մեթոդն էին եղեր սուլթաններուն՝ աճեցնելու համար այն ճղճիմ թիվը, զոր թուրքը ուներ սելջուկներու աճյունին վրա կայսրություն մը հիմնելու ատեն:

Թուրք լուծի տակ անցուցած մեր դարերուն պատմությունը ահավոր էջեր շատ ունի զանգվածային բռնի իսլամացումներու մասին:

Իթթիհադ ինչո՞ւ ինք ևս այդ միջոցին շղիմեր խլակներ անգամ շգելու համար հայ ժողովուրդին: Մյուս կողմե, փո՞ք բարիք էր թուրքին համար՝ եթե հայ կիներով և աղջիկներով լեցվեին իր հարեմները:

Գերման դեսպան Մետերնիխ Պոլսեն կտեղեկագրեր 1916 հունվար 24-ին, թե իգական անդամները այն հայ ընտանիքներուն, որոնց այրերը սպաննված կամ կորսրված են, խմբերով կրածնվին իսլամ գյուղերու մեջ իսլամացվելու համար. զինվորական իշխանությունը հրամայած է նմանա-

պես, որ բանակին մեջ ծառայող բոլոր հայեցը մահմեղական ըլլան և որ այժմեն իսկ իսլամական անուն կրեն, թեև կրնան հետաձգվիլ հատուկ ձևակերպությունները (թլխատություն), պատերազմական վիճակը նկատի ունենալով¹¹:

Աղոտ գաղափար մը տալու համար այն մեթոդներն, զորս թուրքերը փորձեցին, ուղեսզի անձիտեին հայ ժողովուրդի մնացորդացը, հատված մը տանք Արամ Անտոնյանի հոչերեն, էնկյուրի հիվանդանոցը անցուցած օրերուն մասին.

«Էնկյուրի վալին՝ Սթըֆ բեյ՝ որ բացարձակապես արգիլեր էր էրիկ մարդոց իսլամացումը, որպեսզի մարդ շաղատի, հավաքել տվեր էր միայն շատ պատիկ տղաքը, անոնք որ մը շէին կրնար հիշել իրենց ծագումը և զանոնք թլխատել տալով կղոկեր քաղաքին մեջ հաստատված տիպար որբանոց մը՝ ուր դեշիրմե սերունդ մը պիտի պատրաստվեր հայ տղոցմով, իրը պատվաստ թուրք ցեղին: Մեր հիվանդանոցին երկու բժիշկները, նեղիմ և Սավքեթ բեյերը, միակ օրվան մը մեջ չորս հարյուր տղա մեկն թլխատեցին, շոնդալից հանդեսի մը ընթացքին, դավուզ զուռնայով, երգերով, պարերով — արդեն իսկ հաղթանակի նախատոնակ մը: Մեր գեմը գտնվող զինվորական հիվանդանոցին մեջ ալ, բացառություն ըլլալով, կիսլամացվեին հայ զինվորներ, նվագածությամբ և գոռում-գոռումներով¹²:

Լեփսիուսի հրատարակած փաստաթղթերը ևս լեցուն են ահավոր ապացույցներով այն շաղանային մոլոցքին մասին, որ կշարունակեր եռալ երիտասարդ թուրքերու ներսը ընացնչելու համար ինչ որ դեռ կմնար հայեն: Անոնք իսլամացումներն անգամ բավ չէին սեպեր շքացնելու համար հայ ժողովուրդի վերցին մնացորդը:

Շատ ամուր ջղեր ունենալու է, թղթատելու համար այն հայտնությունները, զորս պատերազմեն քիչ հետո ըրավ թուրք մը, նայիմ բեյ, պարզելով աշխարհի առջե կան-խամտածությունն ու սառնասրտությունը, որով երիտասարդ թուրքերը ամբողջ ժողովուրդ մը խողիսողեր էին, և երեսն հանելով գաղտնի հրահանգները, զորս թուրք կառավարությունը ուղղեր էր ստորադաս իշխանյութանց:

Նայիմ բեյ իր հիշատակներուն մեջ կհիշեի միջի այլոց դահիճին զարհուրելի երեք հեռագերը: 1915 սեպտեմբեր 14-ին ան կհրահանգե գավառի իշխանությանց. «Կին, մա-

նուկ, հիվանդ մի նայիթ, որքան ալ անգիտություն ըլլա: Վերջացուցեք անոնց գոյությունը: Մածկագիր ուրիշ հեռագրի մը մեջ, որ 1915 հոկտեմբեր 3 թվականը կկրե, ան կիմացնե գավառի իր ստորադասներուն, թե «Թուրք ոճիները, զորս կկատարեք հայերուն վրա, զերծ են պատիի հայտին»: Ավելի հետո, նույն ամսվան 29-ին, ան կհրահանգե կրկին: «Սպաննեցեք զյավուրները ուր որ գտնեք. պատիի շկա»:

Թաւեաթի գավառի իշխանությանց տեղացուցած գաղնոնի հրահանգներն շանթահարիշ ուրիշ փոխ մը մեզ կներկայացնե գերման հայտնի ընկերվարական և հակապատերազմական գործիշ Հայնրիխ Վիրբյուխեր, «Համաշխարհային պատմության մեջ անախինթաց և ամենազարհուրելի հալածանքներուն» նվիրված իր մեկ գրքին մեջ¹³, ուր ան նպատակ ունեցած է ապացուցանելու, թե հայկական կոտորածները կազմակերպված են կանխամտածությամբ և սառնասրտությամբ:

Իր գրքին համելվածին մեջ գերման ընկերվարականը՝ «Թաւեաթի հրամանագրերը Հալեպի քաղաքապետության՝ սպանություններ կազմակերպելու մասին» խորագրին ներքեւ կներկայացնե ութը զարհուրելի փաստաթղթեր, որոնք լիովի կապացուցանեն, թե Թաւեաթ և իր համախոհները ինչպես ուղեցին հայու հետք չձգել աշխարհի վրա:

1915 սեպտեմբեր 3-ին ան կհրահանգե ուկանանց և երեխաներու հետ վարվիլ այնպես, ինչպես հրամայված է ընել տղամարդություն:

1915 սեպտեմբեր 15-ին հիշեցնելով, որ կապավարությունը, համաձայն կուսակցության հրամանին, որոշած է բոլորովին բնաշնչել ամ բոլոր հայերը, որոնք թուրքի մեջ կրնակին», կհրահանգե սառանց ուշադրություն դարձնելու կանանց, երեխաներու և հիվանդներու, պետք է, որքան ալ ողբերգական ըլլան բնաշնչման միջոցները, վերջ տալ անոնց գոյության, առանց ականջ կախելու խղճի գզացման»:

1915 նոյեմբեր ամսու 23-ին կհրահանգե «գաղնոնի միջոցներով բնաշնչն ընել Արևելյան նահանգներու ամեն մեկ հայ, զոր կգտնեք ձեր շրջանին մեջ»:

1915 դեկտեմբեր 1-ին Թաւեաթ կմեղադրե, թե «Հակառակ այն բանին, որ մասնավոր եռանդ պետք է հանդես բերվեր խնդրուարկա անձերը չնշելու համար, անոնք կղրկվին այնպիսի կասկածելի վայրեր, որպիսին են Սուրիա և Երուսաղեմ», և կա-

¹¹ Լեփսիուս, էջ 220:

¹² «Վերածնունդ տարեցույց», Փարիզ, 1920, էջ 66:

¹³ Heinrich Vierbucher, «Armenien 1915», Hamburg-Bergedorf, 1930.

ելցնե, որ «նման ամեն մեկ համբերատառություն աններելի սխալ է, այդպիսի խոռարաներու աքսորավայրը պետք է ըլլաչնչություն»:

1915 զելտեմբեր 12-ին Թալեաթ կհրամատ և «ընդունիլ և պահպանել այն որբերը Դիայն, որոնք երբեցք հիշել չեն կրնար ինց ծնողքին ենթարկված սոսկումները, այսկ մյուսները աքսորել քարավաններու հետ»:

1916 հունվար 15-ին Թալեաթ խստիվ կարդիկ որբանոց ընդունիլ հայտնի մարդոց երեխանները և կըսե. «Քանի որ կառավառությունը վտանգավոր կսեպէ անոնց գոյուշունը, ուրեմն կնշանակե կառավարության վանկության ղեմ վարպիկ՝ այդ երեխանները կիրակիրելով և անոնց կյանքը երկարածգելով»:

1916 մարտ 7-ին Թալեաթ նոր հրահանգով՝ մը կհրամայե այդպիսի երեխանները պանզիվածորեն բնաջնջել, «առանց սակայն մախապես կասկածի տեղի տալու, այլ հայտնելով, թե մտադրություն կա զանոնք հանձնելու տարագրությանց վարչության հոգատարությանը»:

Երբ սահմոկած աշխարհի, և նույնիսկ Գերմանիկ հանրային կարծիքին մեջ ստեղծված ցասումնեն, գերման կառավարությունը 1917 հունվար 4-ին կզգացներ թուրքերուն, որ հայոց իսլամացումը հակառակ է խղճի աղատության սկզբունքներուն, — «սկզբունքներ, որոնք միշտ հարգված են Թուրքիո մեջ և նույնիսկ երաշխավորված են Յօմանյան սահմանադրությամբ», — և որ լուրջ դժվարություններ կրնան ստեղծել թուրքերուն հաշտության բանակցությանց ատեն», Խալիլ թիյ, այն ատեն արտաքին գործերու նախարար, կապատասխաններ, թե «ցարը իսլամացածներուն քրիստոնեական կրոնին վերադառնալը ոչ պատշաճ է ոչ ալ գործնական, որովհետեւ այդ բանը կրնա նոր տարագրությանց առիթ տալ, և ան կրնա տեղի ունենալ պատերազմեն հետո»¹⁴:

Այսպես վարվեցավ թուրքը հայ ժողովուրդի խլակներուն հետո:

XVIII.—Համիդեն Թալեաթ

Դահիճներ շատ ունեցած է հայ ժողովուրդը իր պատմության ընթացքին: Շատ աշխարհականներ կոխուտած են հայոց աշխարհը, ու ամեն մեկը սուր է փռած հայ օջախներու մեջ: Ալփասլան կամ Զինգիդ բացառություններ չեն. բայց եթե միշտ անոնք է, որ կցցվին մեր մտածումին մեջ, հավանա-

բար անոր համար է, որ դարերով արյուն տվինք անոնց ճետերուն ալ: Մեր օրերուն հասցուցին անոնք իրենց սկսած նախնիրները:

Համիդ վերջին շառավիղն եղավ անոնց՝ Օսմանի գահուն վրա, բայց, իր կարգին, ավելի արյունուշաւ շարագործ մը հաջորդ ձգեց իրեն՝ Թալեաթը:

Բայց ան մինակ չէր:

Երկիրը ափին մեջ կգտնվեր շարաշուր այն երրորդության, զոր կկազմեին Թալեաթ, էնվեր և Զեմալ: Ասոնց գիտակցությամբն ու հրամանովն էր, որ ամեն բան տեղի կունենար երկիրն մեջ: Խառնվածքով իրարմետարքերը կարուրությանը զարգացնելու թարածության մեջ կարածի ներսեն, այս երեք հրեշները համաձայն էին սակայն միակ բանի մը մեջ պետք է չքանար հայր: Ու անոնք ամեն բան ըրին համակամ, իրենք իսկ տնօրինելով ամեն ինչ վերեն, և պարտադրելով իրենց ստորագաներուն:

Երբ Ամերիկայի Պոլստ գեսպանը՝ Մորգենթաու, էնվերի հետ տեսակցության մը պահուն, շրմեղանալու առիթ մը տված ըլալու համար, կըսե, թե կեզրոնական կառավարությունը գուցե հանցանք չունի զավաոի մեջ պատահածներուն, որոնք հավանաբար տեղական իշխանությանց գործն են, էնվեր հետեւալ շնական պատասխանը կուտա:

«Դուք բոլորովին կսփալիք. մենք այս երկիրին բացարձակ տերերն ենք: Ես երբեք դիտավորությունը չունիմ մեղադրանքը մեր ստորակարգալներուն վրա նետելու, և բոլորովին տրամադիր եմ վրաս առնելու ամբողջ պատահածին պատասխանատվությունը: Դահիճը անձամբ համայած է տարագրությանները, և ես համոզված եմ, թե մենք այդ բանին իրավունքը ունինք, նկատելով, որ հայերը հակառակ են մեզի: ավելին կա, մեծերը մենք ենք այստեղ և մենք վարդանվուներն ոչ մեկը պիտի համարձակեր այդ կարգի միջոցներ ծեռք առնել առանց մեր հավանությունը ունենալու»:

Թալեաթ, էնվեր և Զեմալ եթե վերին դեկավարն եղան այն մեծ եղենին, որ մոխրացուց հայը, իթթիհադը ուրիշ երրորդություն մը ևս ուներ, որ զարդերը կազմակերպեց իր ամենեն հետին մանրամասնություններով: Այդ եռվակն երկուքը, թեհաեղդին Շաքիր և Նազրմ, թժիշկուներ էին, իսկ երրորդը, Շուլքիր, Թուրքիո հանրային կրթության նախարարն էր, երեքն ալ անդամ իթթիհադի մերքեզի ումումիսի-ին (ընդհանուր կեդրու):

Ուշագրավ է, որ դաշնակից մարտանավերու Պոլստ ջուրերը հասնելին առաջ, Պոլսեն կփախին իթթիհադի ամենեն պատասխանաւու հինգ պետերը՝ Թալեաթ, էնվեր, Զեմալ,

Նազըմ և թեհաեղին Շաքիր, այսինքն ճիշտ անոնք, որոնք որևէ մեկեն ավելի կվախնաշին քավության պահեն: Արդ, այս Հինգեն երեքը իթթիհաղի համբավավոր երրորդությունն էին, իսկ մյուսները այն երկու հրեշները, որոնք հայկական կոտարածները կազմակերպեցին անոնց կողքին:

Այս հինգը, որ թանկագին գործակից մը ունեցան հանձին Շուլքրիի, և նույնքան թանկագին խորհրդատու մը, որ հրեա էմանվել Քուրասոն էր և մութին մեջ կգործեր, իրենց արժանի ոստիկանությունը ևս ունեցան, որուն ղեկավարները նույնպես երեք էին, Պոլսու ոստիկանական տեսուչ թերթին, հանրային ապահովության տնօրեն Խոմայիլ Զանփուլաղը և ոստիկանության քաղաքական բաժնի պետ Ռեշաթը, որոնք զիրար գերազանցեցին եղենը սկսելու ատեն:

Հայկական ջարդերը տեղվույն վրա կիրարկողները կուսակալներն՝ ու իթթիհաղի պատասխանատու քարտուղարներն եղան սակայն: Անոնց սեփական վայրագությունն ալ դեր խաղաց գործված նախճիրներուն մեջ: Միայն հրահանգներ դրկելով կեղրոնեն, իթթիհաղը պիտի չհասներ իր նպատակին, եթե Սեբատիոն, Վանի, Տիգրանակերտի կամ Էնկուրիի մեջ, օրինակ, Մուռամմերի, Զեղեթի, Ռեշիդի և Աթըֆի նման հրեշներ չունենար Թալեսթ ձեռքին տակ իրեւ կուսակալու Դեռ խոսքը շենք ըներ մյուս կուսակալներուն, և ստորադաս գազաններու այն մեծ ոհմակին, որ տեղվույն վրա կիրարկեց սարսակիները:

Ու ինչո՞ւ նվազ մեղավոր ըլլա թուրք մտավորականներու շարաշուր այն խոսմբը, որ ազգային մոլեռանդությունը թրծեց զանգվածներու հոգին ներս, ու անոնց ներշնչեց այն մտածումը, թե ամեն ինչ ներելի է, երբ կիրարկվի հանուն թրության: Խոլամական օրենքը արքայություն կիսուտանար կրոնքի համար սպաննողին: Ազգային իդեալը, զոր մոլեռանդությամբ շաղախեցին Զիա Գյոք Ալփ, Համդուլահ Սուրհի, Ազմեդ Աղայի, Յուսուփ Աջուրա և իրենց նմանները, հերոս պիտի սեպեր բոլոր անոնք, որոնք հայր պիտի կոտորեին այդ իդեալին անունով:

Տարակույս չկա, որ հատկապես մարզված և կազմակերպված հրոսախոմմքերու կողքին, որոնք տեղահանությունն ու կոտորածը սարքեցին ուղղակի, թուրք ոստիկանությունն ու թուրք ժանդարմը պլիսավոր սատարներն եղան նախճիրներու տառացի կիրարկության: Ի՞նչ խոսք, որ թուրք բանակն ալ անոնց գորավիզ եղավ, և եթե թուրք սպալութենեն շատերն եղան, որ հայ արյան շթաթխեցին իրենց ձեռքերը, հավանաբար դեռ հավատա-

րիմ այն ավանդությանց, զորս ժառանգել էին երբեմնի Հարբիյենն, եղան նաև էնվերի նման հրեշներ, որոնք, անգթությունը արկածախնդրության խառնած, թեհաեղդին Շաքիրներու և գոկտոր նազըմներու հատակագիծը գործողությամբ պսակեցին: Եվ երեսանակի բուն սպայությունը որոշ շափով ձեռնպահ մնաց տեղ-տեղ, պահեստի սպայությունը, զոր իթթիհաղը ափհափո կաղմակերպեր էր զորաշարժի սկիզբը, և զորապելապես մտավորականությունը կաղմակեր, լայնորեն մաս առավ եղեռնին մեջ:

Երիտասարդ թուրքերը Համբիդը գերազանցեցին որքան իրենց անգթությամբ, նույնարան իրենց նախճիրներուն ծավալով:

Համբիդ ստորին խավերու բնազդական կիրքերն է որ շահագործեր էր հայը կոտորելու համար. իթթիհաղ բովանդակ մտավորականություն մը մեղսակից ունեցավ իրեն:

Համբիդ իր ջարդերով ուզեր էր հայերը սարսափեցնել և այդ սարսափին տակ խորտակել բոլոր այն փորձերը, զորս անոնք կրնային ընել ապրելու իրավունք պահպանելու համար իրենց Երիտասարդ թուրքերը ուզեցին բովանդակ ժողովորդ մը չբացնել իսպառ, որպեսզի այլևս ոչ դատ մնա, ոչ ալ դատախազ:

XIX.—Եվ սակայն թուրքեր ալ եղան...

Այսո՛, թուրքեր ալ եղան, որոնք մերժեցին արյան մեջ թաթիսել իրենց ձեռքերը: Հայ ժողովորդը զան'նք ալ չի կրնար մոռնալ: Քիչ եղան անոնք թիվով, բայց եղան: Չենք գիտեր, իթթիհաղի կեղրոնին մեջ, Թալեաթի և իր նմաններուն արարքներեն պժգացողներ կայի՞ն թե ոչ: Գիտենք, փոխարեն, որ հայոց հանդեպ գործված սարսափներեն վրդոված, և նույնիսկ հայուն կարելցող թուրքեր եղան: Տարբեր խնդիր, որ անոնցմեն քիչերը միայն քաջությունն ունեցան զգացնելու իրենց տարակարծությունը:

Այդ քիչերն մեկը Ահմեդ Ռիզան էր: Ան երբեք բարեկամ չէր եղեր հայուն, սկսյալ այն օրերեն, երբ իթթիհաղը կիմսափորեր Փարիզի մեջ և կիմբագրեր «Մեշգերեթ»-ը: Սահմանադրության, Պոլիս դարձին ալ կծու խոսքեր երբեմն սպրեցուց հայոց հասցեին, երբ եկավ բազմիլ օսմանյան երեսփոխանական ժողովի նախագահի աթոռին վրա: Սակայն հայկական շարդերուն ատեն, երբ ծերակուլտի անդամ էր, ինքն եղավ, որ ծերակուլտի մեջ ձայն բարձրացուց ի նպաստ հայոց, մինչ հայ անդամները, իրենց երկյուղեն շշմած: ոչ իսկ ծպտուն մը հանեցին ըլլա, երեսփոխանական ժողովին, ըլլա ծերակուլտի մեջ:

Հայ ժողովուրդը երբեք պիտի շկարենաւ ոնալ մանավանդ այն քանի մը կուսակալուն ու կառավարիչները, որոնք իրենց կահցությունը այլապես ալ ցուց տվին, աշտապանելով հայերը: Եթե եզմիրի կուսակալ Ռահմանին տնտեսական շարժափթիներ ներ հայերը շխախտելու համար իրենց տեսն, Ֆայիր Ալի և Զելալ մարդասիրությունն նեին իրեն միակ իթան՝ իրենց պաշտպատմությունը ընծայած ատեն հայերուն:

Չկա արսորեն գարձած հայ մը, որ երախապիտությամբ չիշե անունը Ձելալ բեյի, որ աջակցություն ընծայեց հայոց, որ պաշտոնին վրա ալ եղավ, սկսելով Հալեպին:

Սահմակ կաթողիկոս 1915 հունիս 6-ին, Համբեն Պոլիս, Զավեն պատրիարքին ուղղած

ՎՐ նամակին մեջ կըրե:

«Ձելալ բեյին Գոնիա փոխադրվիլը բոլոր պավերուն վրա նոր ցավ մը եղավ. նա բոլոր ողբերով հակառակ էր տարագրական քաղաքականության, մեղի շափ կցավեր աննախանթաց թշվառության վրա, բայց չէր կարող պարման տանիլ. բայց վերջապես իր զգացման զոհն եղավ.... Վշտի և տառապանքից եղաց անդարմանելի կորուստ մը ունեցավ հանձին նորին Վահեմության, Վերջին այցելության գրեթե արտասուրով մեկնեցավ, և եկեղեցու գավիթին մեջ զաղթականաց շեղաղելութը տեսնելով՝ հայտարարեց. «Երանի գետինը պատռեր և զիս կլեր, քան տեսնեի պարզված թշվառությունը»¹⁵:

Այսքանով շի փակվիր անշուշտ թիվը թուրքերուն, որ կարեկցությամբ նայեցան հայուն, անոր շարշարանքներուն միշոցին: Եղան ալ, որ իրենց ձեռքեն եկածն ըրին, որ պեսզի նվազ տառապի ան: Բայց այնքան սկզ մուրը, զոր իթթիհագ քսեց ամրող ժողովուրդի մը ճակտին և այնքան մեծ եղավ ընդհանուր անտարբերությունը, որ մարդու ուժերեն վեր է գարձնել պատմության այդ պարհուրելի էջը:

Ա. Խասհակյանը սա երկու տողերն ունի. «Քրիստոս քավ. Սիրե Խ թշնամին.

Թուրքը շկար այն ատեն...»:

Գրված մեծ սպանդեն թիշ հետո, հոգեկան վրության մը պահուն, մեծ բանաստեղծը ըսկը կուզեր իր այդ տողերով, թի Քրիստոս անդամ պիտի հանդգներ հանձնարարել հայուն, որպեսզի թուրքը սիրե:

Դժվար է անշուշտ թշնամի մը սիրել, և նույնիսկ անոր սարքած զարհուրելի նախճիրը մոռնալ, կարենալ ներելու համար անոր:

Հավերժական շեն կրնար ըլլալ անշուշտ թշնամությունն ու ոխը երկու ժողովուրդնե-

րու միջև, մանավանդ երբ անոնք պիտի շարունակեն ապրիլ բով-բովի: Բայց կես դարը շատ քիչ է, որպեսզի ժողովուրդ մը իր այսքան աճավոր սուզը մոռնա, երբ մանավանդ իր թշնամին ամենաղույզն խղճի խալթ մը ի հայտ չըերավ հիսուն տարիներ անցնելի ետքն ալ:

X.—Դահիճը՝ դատախազ

Ամբողջ շորս տարի էր տեսեր սարսափներու շրջանը Արևմտյան Հայաստանի հայության համար: Զինադադարը, զոր թուրքերն ու զաշնակիցները 1918 հոկտեմբեր 30-ին կնքեր էին Մուղրոսի մէջ, դադար կուտար և անոնց, տարբեր երևույթի տակ սկսելու համար սակայն քիչ մը ավելի ուշ, նոր մարդոց ձեռքով:

Ընդհանուր պատերազմեն հայը գորս կուտար խոշտանգված: Ամայացած էր Հայոց աշխարհը, և արևմտահայությունը զո՞ւ էր տված իր ավելի քան կեսը: Վերապրողները ահավոր հոգեր ունեին, և վրա էր տվեր, բացի անթիվ զոհեր, ընդարձակ երկիրներ ալ:

Թուրքը պատերազմեն կելեր ինքն ալ զժքախտ: Պարավեր էր իր զինակիցներուն հետ մեկտեղ, և վրա էր տվեր, բացի անթիվ զոհեր, ընդարձակ երկիրներ ալ:

Ան հիմա կանգնած էր աշխարհին առջև նաև իրեւ հանցապարտ: Արյունով թաթիրված էին անոր ձեռքերը:

Զկա եղեռնազործ մը, որ արդարանալ շփորձեց: Այդպես ըրին երիտասարդ թուրքերն ալ:

Հակառակ այն բովանդակ արհամարհանքին, զոր ցուց սկսած էին տալ երիտասարդ թուրքերը զեպի աշխարհի հանրային կարծիքը, անոնք այնուամենակիվ երբեմն հարկ սեպեր էին բացարություն տալ անոր, պատերազմի ատեն ալ, ինչպես որ տեսանք:

Զինադադարին, երբ աշխարհ ամեն քան արդեն գիտցավ լրիվ թուրքիու մեջ պատերազմի միջոցին պատահած սարսափներուն մասին, թուրքերը այլևս չէին կրնար իրենց ոճիրները պարտկել: Անոնք ստիպվեցան տարբեր մեթոդ որոնել մարդկության ցասումը մեղմելու համար,— մեղադրել իրենց զոհերը: Ծիծաղելի այդ ուզմավարության անոնք դիմեր էին պատերազմի օրերուն ևս հերյուրելով ամբաստանությանց ամբողջ շարան մը: Մեկը մյուսեն ավելի զավեշտական այդ մեղադրանքներուն մեջ, զորս տարածեցին ի լուր աշխարհի, անոնք կըսեն, օրինակ, թե արևելյան նահանգներու ոչ մեկ կողմը իւլամ ընակշությունը հայերու շափ զենք ունեցած է, թի հարձակողները միշտ

¹⁵ «Արևիկան կոկիծներ», Բնագութ, 1927, էջ 190:

հայերն են եղած, իսկ թուրքերը՝ պարզապես զո՞ներ, թե կազմակերպված ապստամբներ եղած են անոնք հինեն ի վեր, և ոչ միայն թուրքեր ու թուրդեր սպաննած են շարունակ, այլև մեցոցւցած են օտարներ, թե անոնք չեն մասնակցած պատերազմական ծախքերու և նվերներու, և զորակոշին չեն պատասխանած, մինչ թուրքերը դիմած են սիրահոժար, թե սպաննած են թուրք վիրավորները և դափարություններ են սարքած ճակատին ետին, թե հայ զինվորները միշտ դասալիք են եղած, անցած են թշնամիին կողմը և չեթեներ կազմած, թե սուտ լուրեր տարածած են հայերը ի նպաստ համաձայնականներու և թուրքերու աննպաստ, և լրտեսություն են ըրած և այլն:

Թոլոր այս հերցուրանքներուն մեջ գերադուզն փաստը, որում կկառշեին երիտասարդ թուրքերը հայոց դեմ իրենց կիրարկած զարհուրելի սարսահիները արդարացնելու համար և որուն կառաջ մնացին հետո ալ, այն առասպեսն էր, թե հայերը կատարասավեին ընդհանուր ապստամբության մը երկրին մեջ: Սխալ պիտի ըլլար ըսել, թե ապատագրության չեն բաղացած հայերը: Ամբողջ երկու դար փորձեր էին անոնք թթափել իրենց լուծը: Հայ ապատագրական շարժումը, որ վերջին արտահայտությունն էր գտած հայ հեղափոխության պատմության մեջ, կասեր էր սակայն այն պահուն, երբ երիտասարդ թուրքերը ասպարել եկեր էին թուրքիան օժտելու համար շինծու սահմանադրությամբ մը: Այդ սահմանադրության հայերն ևս հավատացեր էին ու երազեր բարօր կյանքի մը և մտավոր վերելիքի մը հնարավորությունները գտնել անոր հովանիին տակ:

Արդարեւ, ֆեղայիները իշած էին վաղուց լեռնեն վար երրոր «հուրրիեթ»-ը եղավ: Սասունեն ի վեր անպաշտպան մնացած էին հայոց լեռները, և երբեմնի մեր հայուկները, «հուրրիեթ»-ին, իրենց գյուղերը վազեր եկեր էին, լծելու համար մաճ ու մածկալին: Անդրանիկն էր միայն, որ հավատացած չէր այդ «հուրրիեթ»-ին ու իր գյուղը չէր դարձած:

Իսկ հեղափոխական երգերը, զորս կշարունակեինք երգել «հուրրիեթ»-ի ատեն ալ, այլևս իմաստ չունեին: Մեր գինովությունն էր, որ պահ մը կօրորվեր դեռ անոնցմով, երբ հանգեսներու ատեն ռլուսին շկար»-ը, «Կարկուտ տեղաց»-ը, «Մենք անկեղծ զինվոր ենք»-ը կթնդացնեին սրահները: Անոնցմել էին խրտչեր նաև թուրքերը, և հաճախ կպատահած երեր, որ փողոցներու մեջ թուրք զինվորական ֆանֆառները, իրենք ալ, կձայնակցեին հայում:

«Մայր Հայաստանը ձեռքե նանեցինք, Հիմս ուժ ունինք, դարձյալ ետ կառնենք...»

Հետեւաբար խարիսուկ էր այդ մեղադրանքը, և թուրքերը իրենք իսկ չէին հավատար անոր:

Միակ մտահոգությունը, զոր ունեին հայերը Աղանային ի վեր, նոր աղետներու առջև հանկարծակի զգալու իրենց բաղադրենքն. էր Զենքերը, զորս թուրքերը ձեռք անցուցին տեղ-տեղ իրենց խուզարկության ատեն, ուրիշ բանի համար չէին, բայց եթե ինքնապաշտպանության փորձերու համար: Կակնարկենք այն զենքերուն, որոնք իրապես գտնվեցան հայոց մոտ, և ոչ այն առասպելական պահեստներուն, զորս իրեն թիւ թուրքերը գտեր էին հայերու քովեն և որոնց լուսնկարները տպեր էին՝ աշխարհին ցուցադրելու համար հայոց դավանանությունը:

«Նդհակառակիը, ինչ որ կարելի էր մեղադրել հայ վարիչներուն և առաջին հերթին հայ կուսակցությանց, իրենց ունեցած կույր վստահությունն էր երիտասարդ թուրքերուն վրա, խարկած անոնց մեղրածորան հավատիքներն, վստահություն, որ զիրենք անհոգ դարձուց միջոցներ ձեռք առնելու համար հավանական աղետներու պարագային, և որուն հետևանքով էր, որ զահիճը զիրենք ամենուրեք անպատճառ գտավի Դիմադրությունը, զոր տեղ-տեղ հայը ցուց տվագ ջարդարարներուն դեմ, հապճեպ կերպով պատրաստված ինքնապաշտպանության փորձերու արգասիքն էր լոկ, և ան ևս ամուզ պիտի անցներ, եթե զյուցաղնական ողի մը հանկարծ չոռներ հուսալքված ժողովուրդի մը ներսոր օրհասական պահու մը: Ալլապես, իթթիհաղը ինքն ալ տեղյակ էր հայոց ունեցած զենքերուն, և թուլլատու իսկ եղեր էր անոնց հայթայթման, վստահ, թե անոնք պիտի գործածվեին, երբ վտանգի ենթարկվեր օսմանյան սահմանադրությունը:

Մեկ ուրիշը գիմավոր շարժագիթներեն, զորս թուրքերը ցուց կուտան հայոց հանդեպ իրենց գործադրած նախճիրները արդարացնելու համար, կամափորական շարժումն էր, շարժում, զոր անոնք լիովի օգտագործեցին հայոց դեմ զրգուելու համար նաև թուրք ամրոխը, իրավը սուտին խառնած, գեպիքերը շափաղանցելով և խեղաթյուրելով: Կամափորական շարժումը իրեր պատրվակ հեղհեղելով թուրքերը կուզեին բնական ցուց տալ իրենց ձեռք առած միջոցները սահմանեն ասդին, որոնք իրեն թե կանխելու համար էին դուրսն խուզող թշնամիներու կապը իրենց ներսի արենակիցներու հետ:

Կամափորական շարժումը մեր մեջ անգամ ունեցավ իր հակառակողները: Ոմանք ար-

ածախնդրություն սեպեցին, առանց լուրջ բաշխիք առած ըլլալու ձարեն, հավելյալ ըրյուն տրամադրել անոր բանակներուն և լորիչներու կարծիքով, անխոհեմություն էր Մրահայ Հայքունիներ բերել կամավորական արքերու գլուխը, ինչ որ իթթիհաղը շահագործեց Հայոց գեմ իր շարած փաստերու պարգին: Նույնիսկ զաշնակցության մեջ մեղադրողներ կային Կովկասի զաշնակցական պեկավարությունը շարժման գլուխն անցած ուլալուն համար, ի հեճուկս Կարնո ընդհանուր ժողովի որոշումներուն:

Բայց այս բոլորը իրավունք չէին տար թուրքերուն՝ Հավատացնել փորձել աշխարհին, թե կամավորական շարժումը մեկն էր պիրենք փոխ վրեմի մղող շարժադիմերեն, երբ այլևս ոչ որի համար զաղանիք է, թե Հայոց ճակատագիրը վճռված էր կամավորական խոսմբերու կազմութենեն գեռ առաջ, և թէ այդ խոմմբերը եթե այնքան աշխուժ դարձան, ջարդերու արձագանքն էր պատճառը, որ ցասման կդրգեր հաճախ զանոնք, և նոր շարդերու վտանգին մատնված իրենց եղայրյաները փրկելու անդիմադրելի մղումը:

Եվ այն միենույն իթթիհաղը, որ արեւմտահայ ժողովուրդը պատասխանատու պիտի սեպեր Կովկասի մեջ տեղի ունեցած կամավորական շարժման համար ինքն էր, որ կուղեր մղել Հայերը, խոստումներ և սպառնալիքներ ընկելով անոնց, որպեսզի ոչ միայն զենք առնեն ոռուսերուն գեմ, այլև ըմբուռություններ սարքեն ոռու հողի վրա: Ապացուց՝ իթթիհագական պիտերու դիմումը հաշնակցության ղեկավարներուն, 1914 հունիսին, Կարնո մեջ, զաշնակցության ընդհանուր ժողովի օրերուն, համոզելու համար զանոնք Հեղափոխություն հանել Կովկասի մեջ ոռուսին գեմ, խոսանալով Հայերուն ոռուսերեն խլվելիք հողերուն վրա անկախ Հայաստան, չմոռնալով նաև զգացնել, թե որևէ մերժում բարիք չի կրնար բերել Հայոց...

Այն շրմեղանքը ևս, որ իթթիհաղը հեղած է հաճախ, Հայոց գեմ իր ձեռք առած միշցները կապելով իր բանակներու ապահովության հետ ճակատի վրա, ինքնին կցնդի, երբ աշխի առջև բերենք այն փաստը, որ անոնք կիրարկվեցան նաև ճակատեն շատ հեռուները: Բավական է կարդալ 1915 հունիս 7 թվակիր այն տեղեկագիրը, զոր Վանդեն-Հայմ, Պոլստ գերման դեսպանը, ծանոթ՝ Հայոց հանդեպ իր սնուցած ատելությամբ, կուղեր թեղին, համոզվելու համար, թե սոսկ պատրվակ մըն է նաև թուրքերուն այդ պատճառաբանությունը: «Հայ ժողովուրդին աքսորն ու տեղահանությունը, — կգրեր գետպանը, — մինչև շուրջ 14 օր առաջ սահմա-

նափակված էր պատերազմի արևելյան ճակատի հարեւան նահանգներուն և Աղանայի քանի մը շրջաններուն մեց: Բայց անկե հետո թարձրագույն դուրը որոշած է նույն միջոցը տարածել նաև Տրապիզոնի, Խարբերդի և Սեբաստիոն նահանգներուն վրա և սկսած ալ է գործադրությունը, թեև այս շրջանները առաջմ թշնամի արշավանքին սպառնալիքին տակ չեն: Այս պարագան և այն եղանակը, որով սույն տեղահանությունը կգործադրվի, ցուց կուտան, թե կառավարությունը իրոք նպատակ ունի Հայ ցեղը ջնջելու թթական պետության մեջ»¹⁶:

«անակեն դասալիք եղող Հայերու պարագան, զոր նույնպես մատի փաթթոց ըրին թուրքերը շրմեղնալու համար իրենց վայրագություններուն մեջ, նույնպես զուրկ է լրջութենե: Դասալքություններ միշտ ալ բնական են, մանավանդ երբ մարդ կովկելու կղրկի իր եղբորը գեմ: Բայց իթթիհաղ որևէ մեկն ավելի գիտեր այն հորդորները, զորս Հայ ազգային իշխանությունները ուղղեր էին և անընդհատ կուղերին Հայ զինվորցուներուն՝ շթերանալու իրենց բաղաքացիական պարտականությանց մեջ, իթթիհաղ նույնպես գիտեր, որ Հայերը իրենց արյան տուրքը տվին թուրք պիտության, զրեթե բոլոր ուազմանական երու հաշնակատիւն վրա, և որ էնվեր փաշա, Հայոց զիխավոր զահիճներին մին, Սարըզամիշտեն իր փախուստին ատեն Հայ երիտասարդի մը պարտական էր եղեր իր կյանքը:

Դեռ կարելի էր շատ բան գրել պատրվակեներուն մասին, զորս թուրքերը կհեղինեղեին իրենց ոճիրը գործած ատեն աշխարհը խարելու համար և որոնց կառչեցան նաև հետո, համոզելու համար զայն: Այդ պատրվակները եթե լրություն էին երբ զանոնք կարտասաներ ոճրագործը, որ լիավես զիտակից էր իր արարքին, առնվազն ծիծաղելի էին անոնց բերնին մեջ, որոնք իշխանության գլուխ եկեր էին իրեւ թե իթթիհաղի շարիքները դարմանելու, և որոնց պարտքն էր երիտասարդ թուրքերու նախաճիրները խոստովանիլ:

Ահա, օրինակ, Դամադ Ֆերիդ փաշան, իթթիհաղի հաջորդներին մին սաղրազամի աթոռին վրա, որ 1919 փետրվար 12-ին իսպաղության համաժողովին մատուցած իր ծանուցագրին մեջ Հայ ժողովուրդի ճակատին կննտեր գերազույնը ամբաստանությանց, ըսելով որ Հայերը մեկ միլիոն թուրք սպանած են արևելյան նահանգներուն մեջ 1915-ի 1918¹⁷:

¹⁶ Ամփախուա, էջ 94—95:

¹⁷ „Réponse au mémoire de la Sublime Porte en date du 12 Février 1919“.

Այդ արդեն գերադրականն էր լրբության, — իբր դատախազ կանգնիլ զոհերուն դիմաց:

II.—Հայը լացի պատ չունի

Ահավոր եղավ՝ վերջին հայ մարտիրոսագրությունը, և դժվար թե անոր նմանը արձանագրած ըլլա հայ ժողովուրդի պատմությունը: Հայոց պատմության հիշած բոլոր աղետներուն մեջ այս մեկն էր, որ ամենեն մեծ թիվն էր խած զոհերու:

Երբ «Հուրրիեթ»-ը եղավ, իր պատմական ճառը, զոր արտասանեց Տակսիմի պարտեզին մեջ, սապես սկսավ Զոհրապ:

«Երբ կոփվը կավարտի՝ բանակը իր կորուսները կհաշվե նախ...»

Մենք, զինաղաղարին, ստիպեցանք, ողջերը հաշվել:

Որովհետև մեր կորուստները հաշվել կարելի պիտի լըլլար...

Բայց ի՞նչ հարկ կար մեր տված զոհերը հաշվել: Մեր կորուստը միայն թիվը չէր: Մենք վրա տվինք ինչ որ դարերը կուտակեր էին մեզ համար: Ամայացած Հայոց աշխարհին հետ՝ շքացան մեր օջախները իրենց անուշ ավանդություններով: Ցրեխ-ցրեխ եղավ

ժողովուրդի մը հոգեկան գանձը, իր բեկոր ները հանձննելով աշխարհի շորս հովերում...»:

**

Պատմությունը լացի պատ հաճախ է չյուսեր հայ ժողովուրդին:

Այնեն աղետն հետո, ավերակներուն առջի ան զարհուրած կեցեր է պահ մը, ապա արցոնքը սրբեր ու շարունակեր է ճամբան:

Հայ ժողովուրդը այս անգամ ա'լ փլցուցած է իր լացի պատը: Փոխարեն՝ ուխտի պատ մը կանգնած է իրեն, որուն առջև կուգա տարին անգամ մը, իր մեռելները կանչելու համար իրենց գերեզմաններեն, ու անոնց ըսելու, թե չէ մոռցած վլրենք ու իրենց կտակը:

Վրեմ: Վրեմ լուծելու կարիք շոնի հայ ժողովուրդը: Հայ ժողովուրդը իր վրեմը լուծած է: Իր բեկորները դարձյալ ոտքի են, ու ինք զարձյալ կշեննա հարազատ հողի վրա, աշքերը համարձակ հառած վաղվան, ճամբեր մը կուգա, ամեն քայլափոխին արև ու ծաղիկ ցանելով, ու հատուտ կբալե վաղվան տեսիլքով ու երգով միշտ, իր երազը սրտին մեջ զրկած ամուր:

